ԳՈՓԱԿԱՆ

ՆՈՐԱԳՒՐ

Կ. ՊՕԼՍՈՅ

Գ/ին 20 փարա

Է· ՏԱՐԻ ՝ ԺԷ ՄԷՍԱՁԻ ԱԽԸՐ ՝ ՀՀՂԲ | ՋՈՐԵՔՇԱԲԹԻ 23 ՅՈՒՆԻՍ 1876 | Ն· Տ· ՅՈՒԼԻՍ 5 ԹԻՒ 1843

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Մէկ երկու օրէ ՚ի վեր հասարակաց կարծիքը սկսաւ քիչ շատ որոշ կերպարանք մը առնուլ· ապստամբութիւնն սկսած առեն ամեն մարդ առջի բերան վոքը բան մը կարծեց ու հաւատաց թէ քիչ օրէն կը վերջանայ, սակայն ասոր հակառակ քանի դեռ նայ զայրացաւ, քանի գնայ կոտորածները շատցան, ամեն մարդ այնպէս կը կարծեր թէ ձմեռուան չը ձգար կը հանդարտի, բայց ձմեռն ալ անցուց և շարունակեց· աշխարհիս մէջ չի ձգայ քաղաքագէտ մը՝ որ ատոր վրայ չ'խորհէր, չը ձգայ գրագէտ մը որ գրիչ չը շարժէր, սակայն ՚ի զուր, զի ամենուն ալ տեսութիւնն առոչինչ դրուեցաւ, էն վերջն երբ Աբդ-ուլ-Ազիզ դահընկէց ըլլալով, օգոստափառ Մուրատ գահը բարձրացաւ, արժեթղթոց գնոցն մէկէն ՚ի մէկ ընդհանուր կերպով բարձրանալէն հասկցուեցաւ՝ թէ ընդհանուր խաղաղութիւն մը պիտի վայելենք, սակայն այս յոյսն ալ կամաց կամաց կոտրելով եկանք հասանք հիմայ ճիշտ առաջնոյն գինը, սա տարբերութեամբ որ եթէ առաջ 100 հազար ապստամբ ունէինք՝ այսօր մէկ տասնապատիկ ապստամբ ունինք, գումար մը որ թէև սարսափելի սակայն կայսերական բանակին ստուար թուոյն և ունեցած ահեղ զինուց քով իր արժէքը կը թեթեւցնէ։ Այսու հանդերձ մեծ ծախքերու դուռ կը բանայ և մեծամեծ ճակատամարտներ տեսնելու կը հրաւիրէ զմեզ։

Եւ ինչ պիտի ըլլայ հետեւանքը·— տարակոյս չ'կայ թէ պիտի յաղթուի՝ միայն թէ դրսէն գաղտնի օգնութիւն չ'գտնէ, զի տարիէ մը ՚ի վեր յայտնի ապստամբելու տատամսող իշխանութիւն մը՝ կարելի է հաւատալ թէ արտաքին օգնութեան մը խոստումը չառած՝ այսօր նախայարձակ ըլլալու համարձակի։

Աբդ այս այսպէս ըլլալով ի՞րաց վիճակը նոյնն է քիչ մը աւելի ընդարձակութեամբ։

Առաջ ունէինք ապստամբութիւն մը, սա օգնութիւն կ'գըտնէր այնպիսի դրայիճ մը՝ որուհողը կոխելու ազատ չէինք իւր մենէ առած երաշխաւորեալ առանձնաշնորհումէն և արձակ համարձակ պիտի կրնանք թշնամին դէմ մեր զօրութիւնը գործածել, սակայն տակաւին ազատ չենք սահմանակից այն օգնող դրացիներէն՝ որոց հողը մըտնելու ազատ չենք դարձեալ և առջինէն աւելի ազատութիւննիս սեղմեալ է այս անգամ, զի եթէ առջինը մեր հպատակն էր և մենէ առանձնաշնորհեալ, վերջինը բոլորովին օտար է, մենէ բոլորովին անկախ է և եթէ մենէ զօրաւոր ալ չէ մեզ չափ զօրութիւն ունի, սակայն հոս առջևնիս նիւթական զօրութենէ աւելի՝ դէսպանագիտական զօրութեան մը պէտքը յառաջ կուգայ։ Հոս է ամա Օսմանեան պաշտօնէութեան էն մեծ հանճարը փայլեցնելու առպարէզը, զի մեր գուշակելու կարողութենէն վեր ու բարձր՝ այնպիսի գաղտնիքներ կան, զորս նոյն ինքն ներկայ չարժմանց առաջին գերասաններն ըլլալ պարծենցող դիւանագէտներն ալ չեն գիտեր, զի դիւանագիտութեան էն մեծ գաղտնիքն է մկկզմէկ խաբել և այնպիսի բաներ ուզել, զորս իրօք չուզեր և այնպիսի բաներ չուզել, զորս անձկանօք կը փափաքի։

Աբդ որչափ մեծ հանճար պէտք է դիւանագիտութեան գլուխը գտնուող, Պիզմարքի, Կորչագոֆի, Անտրասիի, Տիղրայելիի և Տերպիի պէս դիւանագիտաց մէջ մտնել, և ատոնց իւրաքանչիւրին ներքին նպատակն ու հեռատես քաղաքականութեան խորը թափանձելով, Օսմանեան չահուց ուղղութիւնը ապահովող քաղաքականութիւն մը բռնել ու հաստատ բռնել առանց որ և է կողմ խոտորելու, և զանոնք խոտորեցնելու։

Ըսողները ըլլան թերեւս թէ, Անգղիա օգնող է մեզ այս մասին և կրնանք անոր քաղաքականութեանը հետեւիլ, սակայն այդ ալ հիմնական բան մը չէ, զի նա ալ իր յատուկ շահն ունի, որ կրնայ մեր շահուց հակառակ գալ երբեմն. ատեն մը Գաղիայէն աւելի բարեկամ չունէինք և անոր քաղաքականութեան հետեւած էինք, սակայն երբ կրէտէի խընդիրն երեւան եկաւ՝ մեր ու անոր շահերն իրարու դէմ եկան, որ ատեն Թիւրքիա իր յատուկ շահուն հետեւելով դէմ կեցաւ ու յաջողեցաւ. այսպէս ալ կըրնայ գալ օր մը որ Անգղիա իր շահը ուրիշ կողմէ մը ապահովէ ու մեր շահը երկրորդական համարի, ուստի մեք ամեն ատեն պէտք է՝ մեր յատուկ քաղաքականութիւնն ունենանք, որու յաջողութիւնն ու ոչ-յաջողութիւնը մեր ձեռքերուն բերնեն կախուած ունի, այսինքն պէտք է զօրեղ ըլլանք ի պահանջել հարկին ՈՉ ԿԱՐԵՄԻՔ բարձր ձայնիւ կարեւոր ըլլալ ընելու համար, զի ձենքին յաղթական իրաւանցը գէմ, ամենայն ինչ կը լուծէ։

Այս յաղթանակն թէև անտարակուսելի է, սակայն ալ աւելի հաստատուն պիտի ըլլար, եթէ երկիրն իր ամենայն հպատակները զինու տակ կրթած ըլլար ժամանակին։

Այսօր պատերազմ մը կայ մեր հողին վրայ, որ կրօնական չէ, սակայն կը տեսնես, որ քրիստոնեայ հասարակութիւն մը չը կայ համախմբելի կամաւորաց բանակին մէջ, ամենքը մահմետական են, ինչու արդեօք այսպէս, միթէ պատերազմը կրօնքի համար է, թէ երկրին համար, այն երկրին որու բաղդին մտանակից ենք ամենքնիս ալ անխտրաբար, այնքան որ եթէ Օսմանեան կայսրութիւնը ափ մը հող կորսնցնէ, ատոր տուած տուրքը մեր ամենուս վրայ պիտի բաշխուի, իսկ եթէ ափ մը հող վաստկի, ատոր տալիք տուրքը մեր տալիք տուրքէն վար պիտի իջնէ ու այնպէս բաշխումն ըլլայ· ինչու՞ ուրեմն քրիստոնեայք ալ իրրև բաղդակից մահմետականայ կամաւոր չը՞ գրուէին այսօր, ժամանակին կառնուար կրթութիւն առած կառնուար բանակներ չը՞ կազմէին և մահմետական պատերազմողաց առջև, իրրև թէ չահ մը ունեցած չըլլան պատերազմին այս ու այն կերպ վախճան մը գտնելէն, անտարբեր հանդիսատես մնայինք։

ԱԶԳԱՅԻՆ

Վաննէն մայիս 31 թուով հեռեւեալ ցաւալի տեղեկութիւնները կուտան Հայրենիք լրագրոյ, զորս բարեխնամ կառավարութեան ուշադրութեանը կը մատուցանեմք խոնարհաբար։

"Գաղաքիս մէջ մեծ վախ և երկիւղ պատճառած է այն օրէն սկսեալ յորում Պօլսոյ մէջ յեղափոխութիւն մը կատարուեցաւ։ Տեղւոյս Այր յարոյց և Նորչէն թաղի մելեռանդ Տաճիկները այս յեղափոխութենէն օգուտ քաղելով, վտանգաւոր խորհուրդ մը յղացած էին. այն էր վանայ մէջ գտնուած Քրիստոնեաները սրէ անցնել։ Բարեբաղդաբար այս խորհուրդը երեւան ելնելով, տեղւոյս վսեմ։ կառավարիչին ազդու գործունէութեամբը և արդարասիրութեամբը չիշեալ դաւադիրը խմբակին գլխաւորները բռնուեցան, բերդարգելանոց դատապարտուեցան։ Եւ սակայն ատով հանդարտութիւնը տիրած չէ տակաւին. հասարակաց սրտերը ահ ու դողի մէջ են։

"Լսեցիք անշուշտ Աղթամարայ վանուց մէջ Յակոբ վարդապետի միլոպիմէ մը գնդակաւ զարնուիլը, նոյնպէս Մատրան

գիւղէն քահանայի մը ճամբան կտտամահ սպաննուիլը. այս երկու սպանութիւնք ահաւոր դէպքեր եղան հասարակաց անդորրութիւնը չփոթելու և մեր կեանքը վտանգի ներքեւ դնելու համար. սակայն մեր վսեմ. արդարասիրութենէն չպիտի կրնան խուսափիլ և արժանի պատիժը պիտի ընդունին։

"Ցաւալի է ըսել որ երէկ տեղւոյս մոլեռանդ տաճիկք քրիստոնեայները կոտորելու խորհուրդնին գործադրելու չափ առաջ երթան, մեր երկրին վիճակը շատ և շատ խեղճ պիտի ըլլայ. վասն զի Քիւրտերը որ աւարառութեամբ և եթ ապրիլ սովորած են, այսպիսի դէպքէ մը օգուտ քաղելով, հայոց գիւղերը մոնելով ամէն կերպ չարիք և ջնաս հասցնելու պիտի վազեն, ամէն բան, մինչեւ իսկ մարդիկ աւարի տանելով։

"Եւ սակայն ներկայ կառավարչին օրով այսպիսի ահաւոր դէպքի մը գործադրութիւնը անկարելի կը համարիմք մենք. վասն զի գիտեմք և համոզուած եմք որ Ն. վեհ. Թ. թիւնը իւր պաշտօնին հաւատարիմ գործադիր և վեհ. Սուլթանին՝ իւր հպատակաց վրայ ունեցած հայրական սիրոյ և զգայմանց գործադրիչն է։ Միայն եթէ ցաւ մը ունիմք, այն ալ տեղւոյս քանի մը մոլեռանդ տաճկաց մասին է, որոնք բոլորովին մոռնալով Հայոց Ազգին տիրասիրութիւնը և առ Օսմ. կառավարութիւնն ցուցցած հլու հպատակութիւնը, անղէն և տկար ազգ մը այսպիսի բարբարոսական միջոցներով ձաղկելու և հարուածելու չափ առաջ կերթան հակառակ մարդկային և եղբայրական զգացմանց։

"Ահաւասիկ ասոնք են մեր ցաւը և հասարակութեան ըրած խորհրդածութիւնքը, զորս ձեզ կը ներկայացնեմք, մեր չնորհակալութիւնը յայտնելով Ձեզ, Ս. Պատրիարք Հօր որ Բ. Դրան միջոցաւ հեռագիրներ թափեց հոս սպանութեանց դէպքերն քննութիւն և դատաստան ընելու համար, որով իր անունը վառ առաւօտեցաւ վանայ գաւառին մէջ"։

—

. . . Խմբագիր,

փունչ լրագրոյն չորեքշաբթի օրուան թիւրիին մէջ կարդայինք թէ Պատրիարքարանը որոշեր է իւսկիւտարի Ս. Խաչ եկեղեցւոյ անօթներէն մէկ մաս մը ծախել և հինուց մնացած պարտքերը գոցել. այն պարտքերը՝ որ թաղեցւոց քուէովը ընտրուած թաղականներուն ոչ տնտեսագիտութենէն առաջ եկած է։

Եթէ ներկայ թաղեցիք այս պարտքերը տալ կուզեն փոխանակ եկեղեցւոյ անօթները ծախելու, այն պարտքին մէկ մասը այն ժամանակի թաղականներուն վճարել տան. որպէս զի անգամ մի ալ թաղական ըլլան՝ տնտեսութիւնը ձեռքէ չի ձգեն. և մնացած մասն ալ այն անձանց թաղականութեանը քուէ տուող թաղեցիին վճարել տան, որպէս զի ինչ բանի քուէ տալը մտածելով քուէ տայ. եթէ պատրիարքարանը այսպէս որոշումմը ընէ կարծեմ լաւ ըրած կըլլայ. իսկ անօթ ծախել և պարտք տալ եկեղեցւոյ կանոնաց ալ հակառակ ըլլալուն կրօնական ժողովն ալ այդ որոշմանը դէմ ըլլալ կը կարծեմք. ո. րովհետեւ ըստ կանոնի եկեղեցւոյ անօթ ծախել և ստակը աղքատաց բաժնել կրնայ ըլլալ, և որովհետեւ թէ եկեղեցւոյ նուէր տալ, և թէ աղքատաց ողորմութիւն երկուքն ալ բարեպաշտական բան մը ըլլալով ժողովուրդին բարեպաշտութեանը չի գպչիր. չենք՝ որքան հին և անպետ ու անդործածելի բան ծախուի եկեղեցիին և գումարը ուրիշ բանի. րու ծախք ըլլուի նէ՝ ժողովուրդին բարեպաշտութեանը կը դպչի չի։

Մայր եկեղեցւոյ պղինձները ծախուելը այս ըսածնուս դէմ ա. ռարկութիւն մը չի կրնար ըլլալ. վասն զի, թէպէտ անոնք ծախուեցաւ. բայց ստակը քարուկիր եկամուտի տրուելով, այն եկամուտէն աղքատաց բաժնուելուն պէս՝ թէ եկեղեցւոյ կանոնը տեղը գացած կըլլայ. և թէ ժողովրդեան բարեպաշտութեանը չի դպչիր։

Մեր ժողովուրդը տալու մէջ առատ է միայն թէ օրինաւորապէս ուզելն է։

Մեծապատիւ էֆէնտի կը խնդրեմ նամակս առջիկայ թերթերուդ մէկուն մէջ հրատարակելնիդ, որով մնամ։

* * *

1876 Յունիս 17 իսկ.

ՆԵՐՔԻՆ

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԵՒ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԿԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ ԱՐԵՒԵԼՅԱՑ ՎՐԱՑ ԴԵՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԵԾ ԴԵՐ ՄԸ ՊԻՏԻ ԽԱՂԱՅ

Բոլոր Եւրոպիոյ ուշադրութիւնը տարիէ մ՝ի վեր արեւելեան վրայ է նա մանաւանդ սա միջոցիս, ղի Եւրոպական Տաճկաստանի մէջ ծայրը չ՝գտնուած էնթրիկ մը կը գառնայ, որուն քաղաքական մեծ դեր մը կրնայ ըսուիլ, Եւրոպական Տաճկաստանը որ այժմ արեւմտեան և հիւսիսային խառն քաղաքականութեան կեդրոնը կամ լաւ և ըսել վառարանն եղած է, ասկէ մեծ դաս մը ու մեծ փորձառութիւն մը պիտի կրնայ առնուիլ։

Ո՞վ պիտ՝ առնէ այս դասն ու փորձառութիւնը, այն որ շատ կամ նուազ շահ մ՝ունի արեւելքի մէջ։

Ի սկզբան Ռումիլիի ապստամբութեան Ռուսիա ամենէն առաջինն եղաւ իբր ի նպաստ խաղաղութեան աշխարհի միջամտել։

Մէն կողմէն Բ. Դրան կռնակը ծեծեց, միւս կողմէն ալ ապստամբաց դէմն անցաւ և արտաստուգիչ աչերը սրբել ձեւացուց։

Ցասվ Ռուսիա, սրտակից բարեկամ և բարերար անկելոյց հրեչակուեցաւ Սլավեան խաչակրութեան մէջ։

Ահա այս եղանակաւ Սլաւներէն այն աստիճան երես հանեց որ, ապստամբութիւնը լաւ մը ընդհանրացաւ 400 0 ապստամբ ի ղուր ի ղուր չարգուեցաւ և Ռուսիա ալ իր նպատակին կէս մը հասած համարելով մեկդի քաշուեցաւ։

Ի՞նչ էր Ռուսիոյ նպատակը և ի՞նչ եղաւ։ Անոր նպատակը Հերսեկովինի ապստամբութիւնը Գարատաղին Պոսնիան Սերպիային և Պուլկարիան ալ Պուլկարներուն տալ, որպէս զի հոգն այս ամենքը դիւրաւ ինքը կըլլէ։

Ռուսիոյ պաշտօնական բերնէն միշտ խաղաղութիւն կը բղխէ և անպաշտօն բերնէն ալ յաճախ և դրեթէ անընդհատ քաջալերութիւն ապստամբաց կը հոսի։

Եւրոպա ամէն կերպով հասկցաւ Ռուսիոյ դերը, սակայն ցարդ ծայր մը տուած չըլլալուն համար Եւրոպա չ՝կրցաւ բայէ ի բաց բերանը բանալ, այլ անոր դէմ դեր մ՝ալ ինք խաղայ։

Այս վոխադարձ դերերուն մէջ ամենէն զարմանալին սա է թէ, Տաճկաստանի անկախութիւնը, ամբողջութիւնը անոր իրաւունքները պաշտպանել ուզող և Եւրոպիոյ խաղաղութիւնը անվըտանգ պահելու ջանացող բոլոր տերութիւնները, ինչպէս կըլլայ որ չեն կրնար համոզել զՍերպիան և զԳարատաղը որ իրենց ապօրինաւոր պահանջումներէն ետ կենան և կը թողուն որ Տաճկաստանի ապստամբութիւնը լաւ մը առաջ երթայ։ Այժմ Սերպիա Բ. Դրան դէմ կը պատերազմի, և Գարատաղն ալ իր նոր դաշնակցին կը ձայնակցի, Ռուսիոյ սպաները Սերպիական հադուստներով կը վխտան Սերպիական բանակներուն մէջ, և ասոնք Հունգարական ճանբով ինչպէս որ առաջ նոյնպէս ալ այժմ և գուցէ հինայ աւելի ևս մթերք և պաշար պատերազմական կընդունին։

Բուսիա այս վտանգաւոր չարժմանց իբր թէ Եւրոպիոյ պէս առաջը չ՝կրնալ առնելով արիւն ձեր ի գլուխ ձեր ըսաւ ու մեկդի քաշուեցաւ և հինայ դիտակը ձեռքն առած պատերազմի դաշտը կը զննէ, Եւրոպա ալ աւելի մեծ և սրատես դիտակով զրուսիա կը զննէ վոխանակ պատերազմի դաշտը զննելու։

Սերպիա և Գարատաղ իրաւ է որ պիտի պատերազմէին Բ. Դրան դէմ, սակայն ոչ հինայ այլ ձմեռը մտնէլէն վերջը, սակայն երբ Ռուսիա տեսաւ որ Հերսեկօ Պոսնիոյ ապստամբութիւնը կիսամեռ վիճակի մէջ մնաւ և յուսացած Պուլկարիոյ յուզմունքը բոլորովին մարեցաւ, այն ատեն վախցաւ որ իր ապագայ նպատակն ապարդիւն պիտի ելնէ, ուստի առանց ձմեռան սպասցնել տալու և միացորդ ապստամբաց արիւնը պղծցնելու, Սերպիան և Գարատաղը ոտք հանեց որպէս զի՝ ասոնք ՀերսեկօՊոսնիոյ ապստամբաց հետ միանալով բան մ՝ալ երթէ չկրնան ընել, գոնէ Բ. Դուռն զբաղեցնելով և ապստամբներն ի ղէն պահելով ձմեռը ձեռք առնու։

Հինայ Սերպիա և Գարատաղ թէ և ոչ յայտնապէս, Ռուսիոյ առաջնորդներն են, որով լաւ կը հասկցուի թէ այս պատերազմին այնպէս չուտով լմնալու գործ չէ։

Եւ ինչպէս որ Հերսեկովինի ապստամբութիւնը ամբողջ Ռումիլիի ապստամբութիւնը հետեւցընելնէլէն զինի Պոսնիոյ և Գարատաղի պատերազմն յառաջ բերաւ, նոյնպէս ալ ներկայ պատերազմը երեք չորս ամսէն վերջը հիւսիսային Եւրոպական մեծ պատերազմ մ՝առաջ պիտի բերէ։

Անտարակոյս կոմսին ծրագրէն սկսեալ մինչեւ Պերլինի գոնգրեսին ծրագիրը որ Բ. Դռնէն և Անգղիայէն չընդունուեցաւ, ա. նոնք անգամ կեղծ էին, և եթէ զայս ծրագիրն ընդունուեր թէ Բ. Դռնէն և թէ ամբողջ Եւրոպայէն, Ռուսիա պիտի ըսեր ապստամբաց որ բնաւ. մի ընդունիք այլ ընդդիմացէք, զի իր պատրաստած ծրագիրը որ անընդունելի էր, սակայն և այնպէս իր նպատակին համեմատ չէր, այլ Եւրոպան և անոր կարծիքն ասով կշռելու և մինչեւ հաշիւը դտնելու համար էնթրիկային մեծ ու սարսափելի գործիք մ՝էր։

Ահա այս գործիքով Ռուսիա Եւրոպիոյ միտքն ու կամքը լաւ մը քննեց ու հասկցաւ, և այժմ իր ապագային նպատակը կը

կատարէ Սերպիան և Գարատաղը պատերազմեցնելով։

Եւ ահա ասոր համար էր որ Պարոն տ'Իզրայելի իբրեւ Անգղիական կառավարիչն, անուղղակի կերպով խորհուրդ տուաւ Կ. Պոլսոյ դեսպանին միջոցաւ Բ. Դրան որ ամեն ճիգ 'ի գործ դնէ որ և է խիստ եղանակաւ նուաճել և մարելու Բումելիի ապրստամբութիւնը՝ առանց յառաջիկայ ձմերը վրայ հասնելու, զի Պ. տ'Իզրայելի հասկցած էր Բուսիոյ դիտաւորութիւնը։ Բուսիա ալ փոխադարձաբար Պարոն տ'Իզրայելիի միտքն հասկցաւ և հիմայ Բումելիի խնդիրը որ պահ մը առաջ դիւրացած և վերջանալու մերձ նկատուած էր ըստ Բ. Դրան, այժմ աւելի կնճռաւոր կերպարանք մ'առաւ, որուն լուծումը ոչ Բուսիոյ ձեռքն է և ոչ ալ Անգղիոյ։ Այլ անոնց ձեռքն է միայն որք զՑաճկաստան վերածել կուզեն այլ ինն կերպարանքով ու եղանակով։

Երէկ՝ առաւօտէն սկսեալ մինչեւ երեկոյ 7 դունդ թէ հեծելահօր և թէ թնդանօթիդ և հետեւակ զօրք փոխադրեցաւ սիրքէճիի երկաթուղւոյ միջոցաւ 'ի Նիշ և 'ի Հերսեկովին, զօրաց իւրաքանչիւր բանակին երկրորդ հրամանատարներն քալալերիչ ատենաբանութիւններ ըրին սիրքէճիի կայարանին վրայ և զօրքերը "բահչահըմ չօգ եաշա" երանդադին աղաղակներով երկնից կամարին արձագանք տուին։

— Այս առաւօտ դարձեալ մէկ դունդ թնդանօթաձիգ զօրութիւն Սկլիմկէի կայսերական զօրանոցէն փոխադրեցաւ 'ի սիրքէճի, նոյնպէս և մէկ դունդ հեծելազօր, և այս երկու դունդերն անմիջապէս փոխադրեցան դարձեալ երկաթուղեաց միջոցաւ 'ի Հերսեկովին։

— Ասիոյ կողմերէն սպասուած հետեւակ և մուվազղաֆ զօրքերը մինչեւ 9 օր հետզհետէ պիտի ժամանին։ ոմանք Մայրաքաղաքիս ճամբով 'ի Նիշ և ոմանք ալ ընդ միւռնիոյ և Աթանայի ճամբով ուղղակի 'ի Թեսաղոնիկէ և անտի 'ի Նիշ։

— Բ. Դուռն անցեալ կիրակի աւուր ժողովով որոշեց չ'ճանչել զՍերպիա իբրեւ պատերազմող այլ ապստամբ ընդ դէմ իր վեհապետին։

— Պաշը պօզուգներու երկու բանակները փութալէս կը պատրաստուին ժամանել 'ի Նիշ և 'ի Հերսեք, այս երկու բանակաց թիւը 35000 ի պիտի յանգի։

Ասոնցմէ զատ Ջերքէսներուն երկու բանակները 22000 ի պիտի հասնի։

— Բումելիի մէկ երկու գաւառներէն երէկ՝ առ Բ. Դուռը ժամանած հեռագրերը կը յայտնեն թէ՝ Անդրիանուպօլսոյ և Փիլիպէի մահմետականաց խիստ մեծագոյն մասը, նոյնպէս և Ալպանաւուտքի բոլոր իսլամները չերմ փափաք յայտներ են տեղական կառավարութեան իրենց ղէնք տրուելով պատերազմի երթալու համար, ասկէ յայտնապէս կիմացուի թէ՝ Ցաճկաստանի իսլամ հանրութիւնն բատ առաջնոյն անտարբեր չէ Ցաճկաստանի շահուն նկատմամբ և հայրենասիրական և կրօնասիրական զգացումմ մը վերստացեր է երկիրն 'ի վտանգի չ'ենթադրելու համար, որով ներկայ պատերազմը կէս քաղաքական և կէս մաս խաչակրական եղած կըլլայ։

— Ադրաքին գործոց պաշտօնեայ Սաֆվէթ բաշա, օտար երկիրները գտնուող կայսերական դեսպանաց, Սերպիոյ և Գարատաղի յարձակումն ընդ դէմ Բ. Դրան իմացնելով հանդերձ մէկ մէկ օրինակ բողոքագիր ուղղեց, առ ամենայն հզօր տէրութիւնս մատուցանելի, որով ներկայ պատերազմին ամբողջ պատասխանատուութիւնը յիշեալ իշխանութեանց վրայ եղած ըլլալն յայտնեց։

— Սերպիացիք անցեալ կիրակի Ցաճկական սահմանն անցնելէն ետքը, Նիշի շրջակաները գտնուած պուլկարներուն մէկ քանի հազար հրացան բաժներ են։ Սակայն պաշտօնական հեռագիր մը կըսէ թէ՝ կայսերական բանակին վերջի բանակին հրամանատարը զապթիյներ հանեց որք բաժնուած բոլոր հրազէնները հաւաքեր են, և պուլկարներն ալ արդէն զատնք յանձնելու դիտաւորութիւն ունին եղեր։

— Նիշի բանակէն երէկ առնուած լուր մը կը յայտնէ թէ՝ Շար քեօյիւ մէջ եղած խան մը առ ժամանակեայ զօրանոցի վերածուած և մէջը 2 վաշտ կայսերական զինուոր գտնուած միջոցին 17 դունդէ բաղկացեալ Սերպիացոց բանակը յանկարծակի զայս խանը պաշարելով ռմբակոծեր է։

Կայսերական բանակը զայս լսածին պէս ամենայն զօրութեամբ թշնամեաց վրայ յարձակեր և զանոնք հալածեր են։

— Բումանիական իշխանութիւնը վախնալով գի մի գուցէ Սերպիոյ պատերազմը կերպիւ իւիք Բումանիոյ անդորրութիւնն վրդովելու առիթ մ'ըլլայ, հրամաններ է դանուբի եղերքին վրայ Շումլայի և վիտինի դէմ գրնուած իր բերդերը կատարելապէս ամրացնել և բատ բաւականին զօրութիւն մը գոյացնել։

Այս որոշումը հաղորդեր է կ. Պոլսոյ իր գործակատարին միջոցաւ Բ. Դրան։

— Վիտինէն ժամանած նամակները մեծամեծ գանգատներ կընեն պաշը պօզուգներուն գործած զանազան անգթութեանց և յափշտակութեանց դէմ։

Ասոնք, հանդարտ դիւղացիներէն շատերը որք անկարող կը գտնուին անոնց նուէր և պահանջուած ստակ տալու, երկաթներով կը կապեն և քաղաքը կը իրկեն եղեր իբրեւ ապստամբ, և կամ ապստամբութեան մասնաժողովոյ անդամ և ասով խիստ շատ գիւղացիներ խռնած են բանտերուն և բանտացուցեալ բաղնիքներուն և ախոռներուն մէջ։

— Երէկ երեկոյ, վիտինի կայսերական բանակէն հետեւալ հեռագիրը ժամանեց։

Վիտին 22 յունիս

Երէկ, իղձոր անուն գիւղին կողմերը ծագած պատերազմին մէջ Սերպիացի զօրաց թիւը 9000 է։

Այս պատերազմէն վերջին հրամանատար Օսման բաշան դէպ 'ի Ջայըր նահանգին վրայ քալեց թէպէտ՝ սակայն թայմոր գետին վրայի կամուրջները խորտակեալ վիճակի մէջ տեսած ըլլալուն համար չ'կրցաւ գետն անցնել. սպասեց մինչեւ որ կամուրջները վերանորոգուի, որուն վրայ պատերազմը վերսկսաւ։

Կը յուսամք որ այս երեկոյ զայըր գիւղը կրնամք մտնել։

— Բարձրապատիւ Մայր Թագուհին Հօճա-Բաշայի և Սալգըմ Սեօյիւտի մէջ տեղի ճանբուն վրայ իր անձնական գանձէն անուշ ըմպելիոյ աղբիւր մը շինել տուած ըլլալով՝ երեկ անոր բացման արարողութիւնը կատարուեցաւ կրօնական և զինուորական մեծ հանդիսիւ։

Գունդ մը կայսերական զինուոր և 100ի չափ 'ի դասուց կրօնականաց և 400ի չափ դպրոցական աշակերտք, աղօթք մատուցին և կեցցեներու աղաղակներ բարձին։

— Ոստիկանութեան պաշտօնատունէն լուր առինք թէ՝ Բարձրապատիւ Աբրահամ բաշային պարտիզպանն 'ի պէյօղլ սպանողները ձերբակալուեր են անցեալ երեքշաբթի երեկոյ, ասոնցմէ մէկը Թօտոր անուն պուլկար մը և երկուքն ալ Արնաւուտ տճիկ են եղեր։

Ջասունք ձերբակալուելէն ետքը, երբ ի քննութեան ուրացեր են, ոստիկանութիւնը բերել տուեր է անմիջապես սպանեալ պարտիզպանին էլէնի անուն ըսպասուհին որն որ անմիջապէս ճանչցեր է եւլեր զԹօտոր։

Սակայն զարմանալին սա է թէ՝ ասոնք սպանութեան միջոցին երեսնին կատարելապէս մրօտած ըլլալով ինչպէս կըլլայ որ մրօտած Թօտոր մը էլէնիէն կը ճանչցուի։

— Սերտարը էքրէմ և զինուբական պաշտօնեայ Ապտ-իւլ Փէրիմ բաշա որ երեկ երեկոյ պիտի մեկներ ի Նիշ, պատճառով մը ետ մնալով այսօր պիտ' ուղղեւորի երկաթուղւոյ ճանբով։

— Երեկ իրիկուն էթեէմեզի մօտ թրամվայի կառքին մէջ երկու յաճախորդաց մէջ վէճ մը պատահելով հարկ կըլլայ ոստիկանութեան միջամտութիւնը, սակայն միջամտող ոստիկանը փոխանակ իր պաշտօնը վարելու երկոցունց մէջ՝ ձեռքի սուինը երկորդի մը փորը խոթելով մարդուն աղիքը դուրս կը թափէ, անմիջապէս դարմանի կը տարուի, սակայն ապրիլն անյուսալի է։

Ոստիկանը ձերբակալուած է, և կսպասենք տեսնել Պայազիտի կախաղանը, եթէ վիրաւորեալը մեռնի։

— Թունուս պէյի կողմէն Բիւսթէմ բաշա՝ երեկ կայսերական պալատն երթալով Օգոստափառ կայսեր ներկայանալէն յետոյ՝ Բ. Դուռը վերադարձաւ և նախարարաց այցելութիւն տըւաւ։

ՎՐԻՊԱԿ

Լրագրոյս "վերջին" երեսը սխալմամբ սահիպի իմիկյազ Թօլաեան ըսուած է, որն որ Մեմուայի հաւատիսին արտօնատէրն է, և այս երկու թերթերն մէկ տպարանի մէջ տպուելէն յառաջ եկած է։

ԴՐԱՄԱԿԱՆ

Կալաթա, 23 յունիս

3 0/0 Արժեթուղթ	
Այս առաւօտ բաց	11–35
Ծամ 2	11–30
Երեկ երեկոյ	12– 7
Բումիլի արժ. ֆր.	34–
1863 վոխառութիւն	78–
1865 »	79–
1869 »	73–
1872 »	–
1873 »	71–
Թրամվայ	1 –10
Բրօք	–
Գանձատուն	–
Պանգ օթթօման	–
Գրէտի ծէնէռալ	–
Պանգ տը գուրթաժ	–
Սօսիէթէ ժէնէրալ	2 –10
Պանգ տը գօնսթանտնօբլը	3 –
Գրէտի օթթօման	2 –
Լօրիում	66–

ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ

Լօնտրա	–
Բարիզ	–
Վիէննա	–

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ

ՎԱՐԴԱՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿԵԱՆ

ՀԱՅՐԱՊԵՏ

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՔԱՀԱՆԱՅ

Ա. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ՔԱՀԱՆԱՅ

Ա. ՍԱՀԱԿԵԱՆ

ՔԱՀԱՆԱՅ

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

ՔԱՀԱՆԱՅ

Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՔԱՀԱՆԱՅ

Ա. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ՔԱՀԱՆԱՅ

Ա. ՍԱՀԱԿԵԱՆ

ՔԱՀԱՆԱՅ

Գ